ԵՐՎԱՆԴՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ (Մ. Թ. Ա. VI ԴԱՐ)

Պատմ. գիտ. թեկնածու Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ
(մ. թ. ա. VI դարի I կես)

Մ. թ. ա. VI դարի սկզբին Հայկական լեռնաշխարհի տարածքում ուրարտական տերությանը փոխարինելու եկավ հայկական թագավորությունը։ Վերջինիս սահմանները մի շարք աշխատություններում տարբեր ձևով են որոշվում։

Հ. Մանանդյանի կարծիքով մ. թ. ա. VI դարում Արմենիան տեղադրվում էր հիմնականում Հայկական լեռնաշխարհի հարավում՝ Ծոփքում, Աղձնիքում, Վանա լճի հարավային կողմում, մասամբ՝ Կորճայքում, ինչպես նաև Եկեղյաց գավառում[1]*։*

Գր. Ղափանցյանը ևս հայերին տեղադրում է հարավում, ուր նրանք իջել էին իրենց բնօրրանից՝ Փոքր Հայքից ու Բարձր Հայքից։ Այստեղից՝ Աղձնիքից՝ Տիգրիսի արևմտյան ակունքների շրջանից, նրանք էթնոքաղաքական ճնշում էին գործադրում դեպի Միջագետք ու Ասորեստան։ Նրանց այս ճնշումը կասեցրեց Դարեհ I-ը ու ստիպեց ուղղվել դեպի հյուսիս՝ Տավրոսից այն կողմ[2]*։ Սակայն փաստերը ցույց են տալիս, որ թագավորության սահմանները ավելի ընդարձակ են եղել՝ գրավելով ոչ միայն Հայկական լեռնաշխարհի զգալի մասը, այլև դուրս գալով այդ լեռնաշխարհի սահմաններից։*

«Կյուրոպեդիայի» մի շարք օբյեկտիվ տվյալներից հետևում է, որ հայկական թագավորությունը մի կողմից սահմանակից է եղել մարական թագավորությանը, իսկ մյուս կողմից՝ խալդայական ցեղախմբին[3]*։ Խալդայների խալդայական երկրի տեղադրման հարցը հանդիպում էր դժվարությունների, քանի դեռ գիտության մեջ իշխում էր Լեման-Հաուպտի կարծիքը ուրարտացիների հետ նրանց նույնության մասին։ Նմանօրինակ նույնացման թերությունները բացահայտեց Բ. Բ. Պիոտրովսկին, որը և պարզեց խալդայների պոնտական բնույթը*[4]*։ Խալդայների կամ, հետևելով Ստրաբոնին (XII, 3, 19), խալիբների մոտավոր տեղադրումը հնարավոր է ժամանակագրորեն նրանց քիչ թե շատ մոտ կանգնած դասական հեղինակների, ինչպես նաև միջնադարյան աղբյուրների տվյալների օգնությամբ։ Մեր օրերի պատմագիտությունը լեռնա-*

---

[1] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1944, էջ 43—44։

[2] Г. А. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1948, էջ 175, 208, 210, 252, 255։ Նույնի՝ Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 42։

[3] И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 355։

[4] Б. Б. Пиотровский, Припонтийские халдеи и урарты, «Краткие сообщения ИИМК», V, 1940, էջ 5—10։

յին խալդայներին տարբերում է ծովային խալդայներից[5]։ Հնում նրանք հավանաբար կազմել են էթնիկական մի զանգված, որը ժամանակի ընթացքում տրոհվել է երկու մասի։ Ծովային խալդայներին հույն պատմագիրներից շատերը տեղադրում են հյուսիսային Փոքր Ասիայի արևմտյան մասերում, օրինակ՝ Հալիս գետից արևմուտք[6]։ Սակայն ավելի ստույգ, միմյանց հաստատող տվյալներից երևում է, որ նրանք բնակվում էին Կոտիորայից (Օրդու) արևելք, նրա ու Կերասունտի միջև։ Այստեղ, ապագա Փառնակիա քաղաքի շրջակայքում է հանդիպում նրանց Քսենոփոնը իր հռչակավոր նահանջի ժամանակ (V, 5, 3)։ Ծովային խալդայներին այդ նույն վայրում է տեղադրում Ստրաբոնը (XII, 3, 18)[7]։

Ինչ վերաբերում է լեռնային խալդայներին, որոնք հայերի անմիջական հարևաններն էին, ապա անտիկ պատմագիրների վկայությամբ նրանք բնակվում էին Փոքր Հայքի ու Բարձր Հայքի լեռներում և դրանց հարավային ստորոտներում։

Հույն պատմիչ Հեկատայոս Միլետացու մ. թ. ա. VI դարին վերաբերող վկայությունների համաձայն, հայերը խալիբներին սահմանակից էին հարավից («Ասիա», պատառիկ 203)։ Ինչպես դրում է Քսենոփոնը իր «Անաբասիսում», Փասիսի (Արաքսի) վերին հոսանքի մոտակայքում գտնվող հայկական գյուղերում հույները տեղեկանում են, որ ճանապարհը նրանց կբերի խալիբների երկիրը, որը Արմենիայի հարևանն էր (IV, 5, 34)։ Շեղվելով այս ճանապարհից՝ հույները, անցնելով փասիանների երկրով, ուղղվում են դեպի հյուսիս-արևելք՝ տաոխների մարզը, որը, ինչպես երևում է նահանջի նկարագրությունից, հարևան էր խալիբների երկրին ամենայն հավանականությամբ արևմուտքից։ Խալիբների երկրով առաջ շարժվելով՝ հույները հասնում են Ճորոխի վերին հոսանքը, որը կազմում էր այդ երկրի սահմանը մի այլ ցեղի՝ սկյութենների հետ։ Դիոդորոս Սիկիլիացին այս երկիրը կոչում է խալդայական։

Արդեն վերը բերված մի քանի տեղեկություններից երևում է, որ խալդայների երկիրը տեղադրվում է այնպիսի մի վայրում, որը հարավից հարևան է հայերին, իսկ արևելքից՝ տաոխներին՝ ապագա Տայքին։ Քիչ ավելի ուշ ժամանակաշրջանի, բայց կասկած չհարուցող տեղեկությունները թույլ են տալիս է՛լ ավելի ճշտելու նրանց զբաղեցրած տարածքի մոտավոր սահմանները։ Ստրաբոնի վկայության համաձայն (XI, 4, 5) խալդայները ապրում էին նաև Բարձր Հայքի լեռների հարավային ստորոտներում, Արևմտյան Եփրատի վերին հոսանքում, Կարինում և Դերջանում, իսկ Պլինիոսի (NH, VI, 11—12, 29) և նույն Ստրաբոնի վկայության համաձայն՝ Փոքր Հայքի լեռներում, Պարիադրեսում ու նրանց հարավային ստորոտներում։

---

5 М. И. Максимова, Античные города юго-восточного Причерноморья, М.—Л., 1956, էջ 28—29։

6 Նույն տեղում, էջ 28։ Г. А. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, էջ 70։

7 Կան ուրիշ անտիկ հեղինակներ (օր՝ Ապոլլոնիոս Հոռոդոսցին), որոնք խալիբներին տեղադրում են տիրարեններից (այսինքն Կոտիորայից) արևմուտք (տե՛ս Г. А. Меликишвили. նշվ. աշխ., էջ 65, 70)։ Այդպես է վարվել Ս. Տ. Երեմյանը «Հայաստանը հելլենիստական դարաշրջանում» քարտեզում (ՀՍՍՀ Ատլաս, Երևան, 1961, էջ 103)։ Քսենոփոնի ու Ստրաբոնի տեղեկությունները ավելի ճանրակշիռ են թվում։

Անտիկ պատմագիրների այս վկայությունները ավել կամ պակաս չափով իրենց հաստատումն են գտնում ինչպես ուրարտական (օրինակ Ռուսա II-ի Ադլչևաղի արձանագրություններում հիշատակվում է Խալիտու խալդայական երկիրը)[8], այնպես էլ հայկական տոպոնոմիկայում և վաղ միջնադարյան տեքստերում։

Այսպիսով պարզվում է, որ լեռնային խալդայ-խալիբները ապրում էին Հայաստանի հյուսիս-արևմտյան մասերում, Բարձր Հայքի ու Փոքր Հայքի լեռներում և այստեղ է, որ նրանք հարևան էին հայերին։ Խալդայական մարզի մոտավոր սահմանը Եփրատի վերին հոսանքն է հարավից, Տայքը՝ արևելքից, Ճորոխ գետը և մասամբ էլ նրանից այն կողմ ձգվող լեռները՝ հյուսիսից ու Գայլ գետի ակունքները՝ արևմուտքից։

Հայկական թագավորության հյուսիսային սահմանը տաոխների երկրից շարունակվում էր հյուսիս-արևելյան ուղղությամբ և միանում Կուր գետին նրա միջին հոսանքի սկզբնական մասում։ Դատելով Հերոդոտի մի շարք վկայություններից, մոտավորապես այս վայրերում են տեղադրվում սասպերները՝ իբերների նախնիները։ Այդ վկայությունների համաձայն Կողքիսի ու Մարաստանի միջև ապրում է մի ժողովուրդ՝ սասպերները (I, 104, IV, 37)։ Շպիգելի առաջարկով այս տեղեկություններն իրավամբ ընդունված է վերագրել մարական կայսրության ժամանակաշրջանին (մ. թ. ա. VI դարի առաջին կես), երբ այդ կայսրությունը Հայկական լեռնաշխարհի ու Անդրկովկասի հյուսիսային շրջաններում իսկապես կարող էր սահմանակից լինել սասպերներին[9]։ Գոյություն ունի և այլ, պակաս հավանական տեսակետ, որը որդեգրված է վրաց պատմաբանների կողմից և որի համաձայն սասպերները զբաղեցրել են Կողքիսի ու բուն Մարաստանի միջև ընկած տարածքը, այն է՝ արևելյան Վրաստանը կամ հարավային Վրաստանը, ներառյալ Արաքսի վերին ու միջին հոսանքը[10]։

Ինչպես էլ որ հասկանանք Հերոդոտին, հաջորդ դարերում Հայկական լեռնաշխարհի այս հատվածներում դրությունը հիմնովին փոխվում է։ Հայերի ու մեսխերի ճնշման տակ սասպերները ետ են մղվում և գուցե նույնիսկ երկու մասի տրոհվում։ «Անաբասիսում» Արաքսի վերին հոսանքից հյուսիս հիշատակվում են հեսպերիտները՝ պետք է կարծել նույն սասպերները, որոնք «Արևմտյան Հայաստան» կոչված վարչական միավորի մեջ էին մտնում։ Սասպերների մյուս, արևելյան խմբերը մղվեցին Կուրից այն կողմ, դեպի հյուսիս-արևելք և այնտեղ կազմեցին վրաց ժողովրդի ու պետության հիմքը։

Պետք է ասել, որ հայկական թագավորության պայմանականորեն հյուսիսային համարվող այս սահմանը Ճորոխ գետի ակունքներից մինչև Կուր գետի միջին հոսանքի սկիզբը մոտավոր է նաև այլ պատճառներով։ Բանն այն է, որ դա, այնուամենայնիվ, էթնիկական սահմանագիծ չէր հայերի ու վերոհիշյալ ցեղախմբերի մեջ։ Ուստի բացառված չէ և նույնիսկ հավանական, որ այդ ցեղերի ներդրավումը Հայաստանի կազմի մեջ սկսվել էր մ. թ. ա. VI դարում,

---

8 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, № 278, էջ 341—342. Հավանաբար խալդայներին սանձահարելու համար է, որ ուրարտացիները Սրղնկայի դաշտում կառուցեցին Ալթընթեփեի ամրոցը։

9 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 339։

10 Г. А. Меликишвили, К истории..., էջ 232։

հայկական թագավորության օրոք։ Խալդայների հպատակեցման դրվագները, որոնք Քսենոփոնը, իր քաղաքագիտական ու բարոյախոսական միտումներին հետևելով, վերագրում էր Կյուրոսին, արդյոք չե՞ն վերաբերում հայ թագավորներին, որոնք պետք է ձեռնարկեին այդ գործը։ Խալդայների հպատակեցումը կամ թեկուզ և միայն հպատակեցման փորձը արվել էր արդեն ուրարտացիների օրոք. այդ երևում է Ռուսա II-ի Աղլջևազի արձանագրությունից։ Բնական է, որ մ. թ. ա. VI դարի հայ թագավորները, լինի դա Երվանդ Սակավակյացը, թե իր որդին՝ Տիգրան Երվանդյանը, պետք է աշխատեին տիրանալ Հյուսիսային լեռնաշղթաներին ու հպատակեցնել ցեղային մասնատվածության պայմաններում այնտեղ ապրող խալդայներին, տաոխներին, սասպերներին ու մյուս ցեղերին՝ պետության սահմանները աստիճանաբար ընդլայնելու հավակնությամբ։

Քսենոփոնի «Կյուրոպեդիայից» տեսնում ենք, որ Հայաստանին սահմանակից մյուս երկիրը Մարաստանն էր։ Հայկական թագավորության հետ Մարաստանի սահմանները պետք է փնտրել Հայկական լեռնաշխարհի հարավարևելքում և հարավում։ Բուն Մարաստանի հետ թագավորությունը սահմանակից էր Ուրմիա լճի շրջանում։ Սակայն մարական տերության ծաղկման օրերին, երբ նրա կազմի մեջ մտան բազմաթիվ նոր երկրներ ու մարզեր, Մարաստանը սահմանակից էր Հայաստանին նաև նրա հարավից։

Հայաստանի հարավը, Տիգրիսից արևելք ու արևմուտք, բռնված էր մարական տիրույթներով։ Բաբելա-մարական պատերազմի դրվագները ընդդեմ Ասորեստանի (մ. թ. ա. 614—605 թթ.) ու ասորեստանյան ժառանգության բաժանման հանգամանքները ցույց են տալիս, որ Մարաստանը ամրացավ ոչ միայն բուն Ասորեստանում, այլ նաև Հյուսիսային Միջագետքում. Տիգրիսից արևմուտք Մարաստանի սահմանը անցնում էր Խառանից հյուսիս՝ Տուր Աբդինի (Կաշշիարիի, Մասիուսի) լեռնաշղթայով կամ գուցե արևմտյան Տիգրիսով։ 554—553 թթ. մարերը այստեղից դուրս մղվեցին նոր-բաբելացիների կողմից[11]։

Տիգրիսից արևելք սահմանը Հայաստանի հետ որոշվում է դժվարությամբ, բայց արդեն այն հանգամանքը, որ Մարաստանի տիրապետության տակ էին գտնվում Ուրմիայի շրջանը մի կողմից ու Հյուսիսային Միջագետքը՝ մյուս կողմից, ցույց է տալիս, որ միջանկյալ Ասորեստանը ևս պետք է մտներ Մարաստանի կազմի մեջ[12]։ Այստեղ սահմանը Հայաստանի հետ, դատելով Հայաստանի սահմանային լեռների մասին «Կյուրոպեդիայում» պահպանված ակնարկներից, պետք է անցներ Կորդվաց աշխարհով կամ ծայրագույն դեպքում՝ Արևելյան Տիգրիսով՝ Ջերմ գետով (Բոհտանսու)։

Ուշադրության արժանի է, անշուշտ, նաև Մովսես Խորենացու (I, 30) մոտ պահպանված հիշատակությունը մարական գաղթավայրերի մասին Արաքսի հովտում՝ Արարատ լեռից մինչև Նախճավան ընկած տարածքում, որը, եթե չի վերաբերում Տիգրան II-ի ժամանակաշրջանին ու նրա անվան հետ առնչվող

---

11 Н. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 315—316, 356։

12 Բեհիսթունի արձանագրության տվյալներից երևում է, որ բուն ասորեստանյան հողերը (Արբելիտիսը) մտնում էին Մարաստանի կազմի մեջ (Н. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 339)։ Որ Մարաստանին կարող են պատկանած լինել Ուրմիայից արևմուտք ընկած տերիտորիաները երևում է նաև վաղ միջնադարյան հայ հեղինակների մոտ հիշատակված «Մարաց ամուր աշխարհի»՝ Ուրմիայից արևմուտք տեղադրությունից։

վերաբնակեցումներին, դուցե արտացոլում է մարական էթնոքաղաքական էքսպանսիայի մի կոնկրետ դրվագ[13]։ Ի. Դյակոնովի կարծիքով Մարաստանի հյուսիսային սահմանը կարող է անցած լինել Արաքսից հյուսիս, քանի որ այն ամփոփում էր իր կարծիքով այստեղ տեղադրված սկյութական թագավորության տարածքը[14]։

Պետք է, սակայն, նշել, որ տվյալ ժամանակաշրջանը բնութագրվում է էթնիկական ուժեղ փոխներթափանցումներով, որոնք պարտադիր չէ, որ համապատասխանեին քաղաքական հանդամանքներին։ Դրա վառ օրինակը հայկական ցեղերի առաջխաղացումն է դեպի հարավ, դեպի բուն Ասորեստանի տարածքը։ Այդ մասին է վկայում Ստրաբոնը ասելով, որ հայերի հնագույն կաղթավայրերը, Եկեղյացից բացի, Շուպրիայից տարածվում էին մինչև Ադիաբենե ու Կալաքենե։ Այդ առաջխաղացումը անկասկած կապված է մ. թ. ա. VII դարի վերջերի դեպքերի ու հատկապես՝ Ասորեստանի անկման հետ, որին, ըստ հայտնի ավանդության, մասնակցել էին նաև հայերը (Մովսես Խորենացի, I, 21)։ Այս կապակցությամբ պատահական չպետք է համարել թրակա-փռյուգական տարրի առկայությունը նույն այս հատվածներում, ի դեմս մուշկերի՝ Կադմուխիում (արդեն մ. թ. ա. XII դարում և ավելի ուշ՝ մ. թ. ա. IX դարում) և Մոկքում (մոքսեններ), կամ գորդիենե ցեղանվանման մեջ պահպանված էթնիկական տարրի (Գորդի)[15]։

Հայկական թագավորության արևմտյան սահմանի այն հատվածը, որ ընկնում էր Մալաթիայից հարավ, Եփրատ գետն էր կազմում։ Այդ երևում է Հերոդոտի քիչ ավելի ուշ ժամանակաշրջանի տեղեկություններից, որոնց մասին կխոսվի ստորև։ Ուշադրության պակաս արժանի է անտիկ հեղինակներից Սոլինի վկայությունն այն մասին, որ նշված ժամանակաշրջանում Կիլիկիայի գերիշխանությունը տարածվում էր նաև Հայաստանի վրա, հետևաբար Եփրատը չէր կարող սահմանը լինել։ Եթե Սոլինի տեղեկությունը որևէ նշանակություն կարող է ունենալ, ապա միայն այն իմաստով, որ Կիլիկյան պետությունը ընդարձակվել էր անդրեփրատյան (Եփրատից արևմուտք), ապագա Փոքր Հայքի տերիտորիաների հաշվին։

Մալաթիայից հյուսիս սահմանն անցնում էր Եփրատից արևմուտք, իր մեջ առնելով առնվազն Փոքր Հայքի ապագա տարածքը, որը, ոչ առանց հիմքի, համարվում է հայերի հնագույն բնօրրանը, հայերի կուտակման նախնական վայրը։ Այստեղ և Բարձր Հայքում էր ձևավորվել Հայասա Ազզի հնագույն միավորը, որին փոխարինելու եկան հնդեվրոպական լեզվախմբի մի այլ ճյուղին պատկանող արմենները։ Մ. թ. ա. XII դարում սրանք, Թրակա-փռյուգական մյուս ցեղերի կազմում, տարածվեցին Փոքր Ասիայում՝ պատճառ դառնալով խեթական թագավորության կործանման։ Նրանց մի մասը շարունակեց

---

13 Ս. Տ. Երեմյանի կարծիքով առ մարերի տակ կարելի է հասկանալ Հերոդոտի մոտ հիշատակված մատիենեներին (տե՛ս Ի. Մ. Дьяконов. նշվ. աշխ., էջ 353, ծան. 3)։

14 И. М. Дьяконов. նշվ. աշխ., էջ 251, 281, 291—292, 339։ Սկյութական թագավորություն Անդրկովկասում տեղադրելու փորձը անհավանական է թվում։ Թագավորությունը պետք է Ուրմիայի շրջանում փնտրել (Սակկըզի՝ Զիվիեի շրջապատում)։

15 И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1969, էջ 123—124, 200, 219։ Г. А. Меликишвили, К истории..., էջ 108, 109, ծան. 24։ Ս. Տ. Երեմյան, Հայկական առաջին պետական կազմավորումները, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 92։

շարժվել դեպի արևելք ու մտնելով Հայկական լեռնաշխարհի տարածքը՝ հաստատվեց նրա հարավ-արևմուտքում, Շուպրիայում։ Մյուս մասը հաստատվեց Փոքր Հայքում և Բարձր Հայքում։ Անդրեփրատյան այդ մեծ տարածքում արմենների գոյության մասին փաստերը, ինչպես ցույց է տվել Ս. Երեմյանը, բազմաթիվ են և որ կարևոր է՝ բազմաբնույթ։

«Իլիականի» տվյալների համաձայն Հալիսից հարավ, Կեսարիայից ոչ հեռու, Զևսի հրաշունչ լեռան ու Տյուփոն հրեշի առասպելի հետ առնչվող Արպեոս լեռան շրջապատում գտնվում էր արիմների բնակավայրը։ Այս տվյալները իրենց զուգահեռներն ունեն նաև հայկական նյութերում։ Հենց այստեղ, արիմների երկրում է տեղադրվում Պոոտին Արմենիան, ոչ թե առաջին, այլ նախնական Հայքը և նույն տեղում, Հրաշունչ լեռից ոչ հեռու տեղի է ունենում Արամի ու Տիտանյան Պայապիս Քաղեայի կռիվը[16]։ Այստեղ հիմնադրվող քաղաքը՝ ապագա Կեսարիան, կոչվեց Մաժաք, հավանաբար փռյուգացի մուշկերի անունով։

Անդրեփրատյան այս նույն տարածքում էր գտնվում Թեգարամա թագավորությունը ասորեստանյան աղբյուրների Թիլ-Գարիմուն, որը վստահորեն տեղադրվում է Մալաթիայից հյուսիս-արևմուտք։ Այս թագավորությունը ոչ միայն կապվում է հայկական իրականության հետ, ինչպես երևում է Աստվածաշնչից ու նրա մեկնիչների տվյալներից[17], այլ ոմանց կարծիքով ուղղակի հոմանիշ է հայկական թագավորությանը (Տուն Թորգոմայ[18]), որը, ինչպես պարզվում է այս փաստից, իր արևմտյան սահմանները հաստատել էր Եփրատից բավական հեռու։ Աստվածաշնչի Թոդարման հայկական իրականության մեջ դառնում է Թորգոմ և, որ կարևոր է, համարվում է Հայկի հայրը՝ մի անգամ ևս ընդգծելու համար Փոքր Հայքի նշանակալից դերը հայ պետականության ստեղծման և ընդհանրապես հայկականության հաստատման գործում[19]։

Մուշկերը դեռ երկար ժամանակ պիտի հիշատակվեն Եփրատից այն կողմ, օրինակ Կարքեմիշում։

Այստեղ, Անդրեփրատյան տարածքում մ. թ. ա. VII դարում թագավորություն է հիմնում ոմն Գորդիոսը, որի անվան փռյուգական ընդգծված ձևը թելադրել է տալիս, որ նա կարող էր Թոդարմայում հայ-փռյուգական քաղաքական միավոր հիմնած լինել[20]։ Ամեն դեպքում արմեններից բացի, որոնց անունով Հալիսի ակունքի մոտ գտնվող լեռը կոչվեց արմենական կամ արմենների (Հերոդոտ, I, 72), այստեղ բնակվեցին աղգակից թրակա-փռյուգական այլ ցեղեր ևս[21]։

Փոքր Հայքում են հաստատվում ալիզոնները և օդոմանտները, որոնց թրակա-փռյուգական ծագումը հավանական է[22]։

---

16 Ս. Տ. Երեմյան, Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը. «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 39—45։

17 Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 311—312։ Г. А. Капанцян, նշվ. աշխ., էջ 140—141, 153, 255։ И. М. Дьяконов, История Мидии, էջ 314, ծան. 3։

18 И. М. Дьяконов, Предыстория..., էջ 183։

19 Г. А. Капанцян, նշվ. աշխ., էջ 234 և հաջորդ։

20 И. М. Дьяконов, Предыстория..., էջ 215, 228։

21 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 313, 314։ И. М. Дьяконов, Предыстория..., էջ 228։

22 Ալիզոններին Ադոնցը սկյութացիներ է համարում (նշվ. աշխ., էջ 315, 316)։

Այս բոլոր տվյալները, ինչպես տեսնում ենք, խոսում են թե՛ հայերի ու նրանց ցեղակիցների էթնիկական տարածման և թե՛ նրանց քաղաքական իշխանության մասին, որը այստեղ, թագավորության արևմտյան մասերում համընկնում էր ոչ միայն Փոքր Հայքի, այլ նաև ապագա Առաջին (կենտրոնը՝ Սեբաստիա) և Երկրորդ (կենտրոնը՝ Մալաթիա) Հայքի տարածքի հետ, իր մեջ ամփոփելով այդպիսով նաև Կապադովկիայի որոշ մասեր[23]։ Պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ դեռևս ուրարտացիներն են ձգտել տիրանալ անդրեփրատյան շրջաններին։ Հիշենք Սարդուր II-ի պայքարը Հյուսիսային Ասորիքի համար։ Տվյալ դեպքում կարևոր են թվում Ռուսա II-ի Ադրլջևազի արձանագրության տվյալները Խալիտու, Մուշկու և Խաթե երկրների մասին, որոնք որոշ չափով կարող էին համընկնել ապագա Փոքր Հայքի տարածքի հետ[24]։

Այս բոլորին պետք է ավելացնել այն հետաքրքիր հանգամանքը, որ մարակյան և պարսկական, ավելի ճիշտ՝ Աստիագեսի ու Կյուրոսի մարզային քաղաքականության համեմատումից երևում է, որ Հալիսից արևելք գտնվող հողերը, որոնք նվաճել էին մարերը Կիաքսարեսի օրոք, կառավարվում էին ոչ թե անմիջականորեն իր կամ իր հաջորդի, այլ հայ թագավորների կողմից, կամ նույնիսկ, ըստ որոշ կարծիքների, մտցվել էին հայկական թագավորության կազմի մեջ[25]։ Միայն Կյուրոսի օրոք է, որ երբ Հալիսից այն կողմ նվաճված հողերի հաշվին ստեղծվեց կապադովկյան սատրապությունը կամ դասկիլեական մարզը, վերոհիշյալ տարածքը միացվեց նրան[26]։

Հայկական թագավորության հյուսիս-արևելյան և արևելյան սահմանները դժվարությամբ են որոշվում, որովհետև աղբյուրներում այդ մասին տվյալներ համարյա չկան։ Ընդհանրապես շատ քիչ բան գիտենք Հայկական լեռնաշխարհի արևելյան մարզերի մասին այդ ժամանակաշրջանում, թե՛ էթնիկական, թե՛ բաղաքական տեսակետից[27]։ Մեզ մնում է ենթադրել, որ հայկական թագա-

---

23 Г. А. Капанцян, նշվ. աշխ., էջ 156։

24 Ս. Տ. Երեմյան, Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 109, ծան. 83։ И. М. Дьяконов, История Мидии, էջ 320։ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 315։ Անդրեփրատյան այս տարածքում գոյություն ունեցող էթնոքաղաքական իրավիճակը հաջող կերպով է ցույց տրված Ս. Երեմյանի «Ուրարտուի պետությունը» քարտեզի վրա («Հայ ժողովրդի պատմություն, հատ. 1, Երևան, 1971)։ Հայերի էթնոքաղաքական առկայությունը անդրեփրատյան այս տարածքում, ապագա Փոքր Հայքի և նրան հարակից շրջաններում, մեծ նշանակություն ունի ոչ միայն հայկական առաջին թագավորության, այլ նաև 13-րդ սատրապության «Արևմտյան Հայաստան» ենթաշրջանի և նույնիսկ Փոքր Հայքի պատմության համար։ Այնուամենայնիվ, չնայած Հայաստանի տարածմանը Եփրատից այն կողմ, շեշտակիորեն դեպի արևմուտք, կարիք չկա ո՛չ մ. թ. ա. VI դարում և ո՛չ էլ դրանից հետո Հայաստանի (լինի դա թագավորություն թե սատրապություն) ծանրության կենտրոնը այստեղ փնտրել։ Ուստի հայկական թագավորության նույնացումը նոր խեթական Մելիդ (Մալաթիա) թագավորության հետ անհավանական է թվում, իսկ Մելիդ (Մալաթիա) քաղաքի նույնացումը 13-րդ հայկական սատրապության գլխավոր կենտրոնի հետ՝ անհամոզեցուցիչ (տե՛ս И. М. Дьяконов, Предыстория..., էջ 187—188, 228)։

25 И. М. Дьяконов, История Мидии, տե՛ս մարական տերության քարտեզը, էջ 337։

26 Նույն տեղում, էջ 344, 348, 356։

27 Ուրարտական պետության գոյության օրերին կիրառվող վերաբնակեցման քաղաքականությունը չէր կարող չանդրադառնալ երկրի էթնիկական իրավիճակի վրա։ Այս տեսակետից հետաքրքիր են Արգիշտի I-ի իրագործած միջոցառումները՝ կապված Խաթե և Ծուպանի

վորության սահմանները տարածվում էին հեռուները՝ հասնելով մինչև Կուր գետը[28]։

Նման ենթադրության համար մեզ հիմք են տալիս նախորդ ուրարտական ժամանակաշրջանի տվյալները, որոնք ի տարբերություն ընդունված կարծիքի, թույլ են տալիս փաստելու ուրարտացիների առկայությունը Սևանա լճից այն կողմ ոչ միայն լեռնային մասերում, այլ նաև Կուրի աջափնյա հարթավայրերում։ Այժմ հետաքրքիր ու փաստացի տեղեկություններ կան, որոնք վկայում են, որ ուրարտացիները ոչ միայն ամուր պահել են իրենց ձեռքում Սևանի ավազանը, այլև երկու՝ հարավային ու հյուսիսային կողմերից շրջանցելով այն՝ հասել են ընդհուպ մինչև Կուր գետի հովիտը։ Մինչև վերջերս հայտնի էր, օրինակ, որ ուրարտացիները, նվաճելով Կիեխունի բնակավայրը (այժմյան Լճաշենը), չեն շարունակել իրենց հաղթարշավը լճից այն կողմ։ Սակայն Արգիշտի I-ի խորխորյան տարեգրության մեջ հիշատակվող Ալիշտու տեղանվան նույնացումը Աղստևի հետ թույլ է տալիս ուրարտացիներին հասցնել Սևանի լեռնանցքից այն կողմ, առնվազն Դիլիջանի և Իջևանի շրջանները[29]։ Որ ուրարտացիները առաջ են շարժվել Աղստևի հովտով, երևում է նաև հնագիտական պեղումների արդյունքներից։ Այսպես, Ղազախի մոտ գտնվող Սարըթեփե բնակավայրի պեղումների նոր մեկնաբանությունները ցույց են տալիս, որ ուրարտացիները ոչնչացրել են այստեղ գտնվող ուշբրոնզեդարյան, վաղերկաթեդարյան բնակավայրը[30]։ Խոսվում է, ոչ առանց հիմքի, ուրարտական արձանագրության գոյության մասին Սևանից այն կողմ, Փառիսոսի լեռներում, ժամանակակից Խուշչի (Խաչակապ) գյուղում[31]։ Հավանաբար Կուրի հարթավայր դուրս գալուց հետո ուրարտացիները տիրացել են արևելքից դեպի Սևան տարածվող լեռնաշխարհին ևս։

Դեպի անդրսևանյան, մերձկուրյան տարածքը ուրարտացիների մյուս ուղին ենթադրվում է Սևանի հարավային ափով, Թարթառի հովտով։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում այս տեսակետից Սարդուրի II-ի՝ Ծովակի (Զաղալու) արձանագրության մեջ հիշատակված Ուրտեխե երկրանվան նույ-

---

երկրներից Արարատյան դաշտ փոխադրվող բնակչության հետ, որը կարող էր հայախոս լինել (И. М. Дьяконов, Предыстория..., էջ 233)։ Բացի դրանից պետք է նշել, որ, ինչպես պարզվում է վերջին ուսումնասիրություններից. Հայկական լեռնաշխարհի արևելյան մարզերը ևս գտնվում էին Թրակա-փռյուգական ցեղերի ազդեցության ոլորտի մեջ, մի հանգամանք, որը չէր կարող չարագացնել այս մարզերի հայացումը (տե՛ս Ս. Գ. Պետրոսյան, Թրակա-կիմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. IV—V դդ.), «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1։ Նույնի՝ Հին Թրակյան էթնիկական տարրը հնագույն Վանանդում, ՀՍՍՀ ԳԱ «Լուրեր» (հաս. գիտ.), 1977, № 8, և այլն)։

28 Ինչպես հայտնի է այդպիսին էր վիճակը նաև ավելի ուշ, օրինակ՝ Արտաշեսյանների ժամանակաշրջանում։ Տե՛ս А. Ш. Мнацаканян, О литературе Кавказской Албании, Ереван, 1969, էջ 19 և հաջորդ։ А. П. Новосельцев, К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период. «Кавказ и Византия», I, Ереван, 1979.

29 Տե՛ս Ս. Տ. Երեմյանի Ուրարտուի քարտեզը (ՀՍՍՀ Ատլաս, Երևան—Մոսկվա, 1961, էջ 102)։ Մ. Ա. Խաչատրյան, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 189։

30 Է. Վ. Խանզադյան, Մեծամոր, Երևան, 1973, էջ 57—58։

31 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении (III—I тыс. до н. э.), Ереван, 1976, էջ 215։

նացումը հայկական Արցախի հետ[32]։ Ուրտեխեն անդրսևանյան այն երկրներից է, որ նվաճվել է Սարգուրի II-ի կողմից։ Անդրսևանյան 19 երկրների նվաճման մասին է խոսում նաև Ռուսա I-ը, սակայն նրանց տեղադրման հարցը մնում է առկախ։ Էականն այն է, որ Զանգեզուրի ու Ղարաբաղի տարածքը գրավելուց հետո ուրարտացիները ձգտել են դուրս գալ Կուրի հովիտը՝ նվաճելով Սարգուրի II-ի արձանագրության մեջ հիշատակվող Տերիանի երկիրը Թարթառի միջին հոսանքում, միջնադարյան Տրտու գետի ավազանում, Արցախի և Ուտիքի սահմանագծում[33] և Գամիրա երկիրը Կուրի հարավային ափերին[34]։

Հայկական թագավորության տարածքը, այդպիսով, հիմնականում համընկնում էր ուրարտական պետության տարածքի հետ և դրա արտայոլմանը մենք հանդիպում ենք աքեմենյան ժամանակաշրջանի արձանագրություններում[35]։ Նրանցում Արմինա և Ուրարտու անունները համարժեք նշանակություն ունեն, ուստի Ռ. Մելիքիշվիլու կարծիքը, որ Արմինայի տակ պետք է հասկանալ միայն ուրարտական արձանագրություններում հիշատակվող Արմե երկիրը, ժամանակակից Դիարբեքիրից հյուսիս, չի համապատասխանում իրականությանը[36]։ Ինչպես տեսանք, հայկական թագավորության սահմանները, որոշ տեղերում պակաս (օրինակ, Ասորեստանի կողմում), որոշ տեղ ավելի (օրինակ, արևմուտքում) չափով, բայց ընդհանուր գծերով քիչ էին տարբերվում ուրարտական պետության սահմաններից։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՅՈՒՐՈՍԻ, ԿԱՄԲՅՈՒՍԵՍԻ ՕՐՈՔ, ԴԱՐԵՀԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Այս ժամանակաշրջանի Հայաստանի տարածքի հարցերը կարելի է որոշ չափով պարզաբանել՝ ելնելով Կյուրոսի մարզային քաղաքականությունից և Հայաստանի պատմության տվյալներից։

Բավական կարճ ժամանակամիջոցում Կյուրոսը ստեղծեց մի ընդարձակ կայսրություն, որի կազմի մեջ մտան այնպիսի նշանակալից պետություններ, ինչպիսին Մարաստանն էր, Նոր-բաբելական պետությունը, Լիդիան։ Ո՞րն էր Կյուրոսի քաղաքականությունը այս երկրների նկատմամբ։ Մի քանի փաստերից ելնելով՝ կարելի է խոսել ինչ-որ մեղմ քաղաքականության մասին՝ զուգակցված երևութական, ցուցադրական միջոցառումներով։ Նվաճված երկրների թագավորներից և ոչ մեկը չսպանվեց, ընդհակառակը, Կրեսոսը առժա-

---

32 Г. А. Капанцян. Chetto-Armeniaca, Ереван, 1931.

33 Տե՛ս Ս. Երեմյան, Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացույցը» («Ն. Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 82)։

34 Հ. Ղարադյոզյան, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1978, № 10, էջ 65։

35 Ի. Դյակոնովի ենթադրությունը, թե Հայկական թագավորությունը կարող էր ստեղծվել ոչ թե Ուրարտուի տեղը, այլ նրա կողքին, այսպիսով, ոչ միայն չի հաստատվում (История Мидии, էջ 354, ծան. 3), այլև հակասության մեջ է մտնում իր իսկ տեսակետների հետ։ Հետագայում երկու սատրապությունների ստեղծումը թագավորության տարածքում գուցե և արտացոլում է Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող էթնիկական տարբերությունը, բայց չի բացատրում մի երկրի գոյության փաստը Արմինա կամ Ուրաշտու հորջորջմամբ (И. М. Дьяконов, История Мидии, էջ 354, ծան. 4)։

36 Г. Меликишвили, Наири-Урарту; Г. А. Капанцян, Хайаса—колыбель армян, էջ 175, 191, 208, 252։

մանակ մնաց գահի վրա, Աստիագեսին դահի վրա մնալու առաջարկ արվեց, Մարաստանում և Բաբելոնում թագավորությունը չվերացվեց, այլ Կյուրոսը իրեն հռչակեց Մարաստանի և Բաբելոնի թագավոր։

Սակայն շուտով ամեն ինչ իր տեղը գտավ և նվաճված այս երկրները վերածվեցին կայսրության մարզերի, որոնք ղեկավարվում էին Կյուրոսի նշանակած կառավարիչների կողմից։

Տարբեր էր Կյուրոսի քաղաքականությունը ավելի փոքր երկրների նկատմամբ։ Այստեղ պահպանվեցին տեղական իշխանավորները՝ թեկուզ և որպես կայսրության վարչության ներկայացուցիչներ. օրինակ, Կիլիկիան, որտեղ պարսիկները չվերացրին թագավորին՝ Սիենեզիսին։ Իրենց տեղում մնացին Փյունիկյան թագավորները, Կարիայի, Լիկիայի, Պափլագոնիայի իշխանավորները։

Եթե այս տեսանկյունից մոտենալու լինենք Հայաստանի պատմությանը Կյուրոսի օրոք, ապա այստեղ ևս շատ բան չպետք էր փոխվեր նախորդ՝ մարական ժամանակաշրջանի հետ համեմատած։ Հիրավի, հայերը պետք է հարկ վճարեին համարյա թե նույն չափով, ինչ որ մարերի օրոք և զորքով մասնակցեին պատերազմներին։

Կյուրոսի և Տիգրանի ինչ-որ բարեկամության մասին (հայերը օգնել էին Կյուրոսին մարերի դեմ) Խորենացու և Քսենոփոնի մոտ պահպանված իրարից անկախ որոշ տեղեկություններ նույնպես խոսում են այն բանի օգտին, որ Հայաստանի ստատուսում էական փոփոխություններ չէին կատարվել։ Որոշ ակնարկներից երևում է, որ Կյուրոսի օրոք արքայազն Տիգրանը նույնիսկ թագավոր դարձավ։ Միայն իշխանության վերջին տարիներին, մահից առաջ, Կյուրոսը որոշեց իր կրտսեր եղբորը՝ Թանաոքսարեսին նշանակել Հայաստանի, Մարաստանի, կադուսիացիների սատրապ։ Այս տեղեկությունը, որը պահպանվել է Քսենոփոնի «Կյուրոպեդիայում», վստահություն չի ներշնչում, քանի որ այլ աղբյուրների համաձայն Թանաոքսարեսը միջինասիական մարզերի կառավարիչ էր նշանակված։ Նույնիսկ եթե այս նշանակումը իրական համարենք[37], այն չի փոխում մեր պատկերացումները Հայաստանի տերիտորիայի մասին, որոնք բխում են վերևում շարադրված պատմական համառոտ ակնարկից և որոնց էությունը այն է, որ Հայաստանը շարունակում էր մնալ մ. թ. ա. VI դարի առաջին կեսի հայկական թագավորության սահմաններում։

Ահա մի քանի լրացուցիչ տեղեկություններ նշված ժամանակաշրջանի վերաբերյալ։

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում հայերին շարունակում էին սահմանակից լինել խալդայները։ Կյուրոսի կողմից նրանց հպատակեցման դրվագները բերված են «Կյուրոպեդիայում»։ Ինչպես վերևում տեսանք, այդ իրադարձությունը կարող է ավելի վաղ ժամանակաշրջանում ու հայ թագավորների ձեռքով կատարված լինել։

Արևմուտքում Հայաստանի սահմանը դառնում է ավելի որոշակի։ Փոքր Ասիայում կատարած նվաճումներից հետո Կյուրոսը կազմակերպում է կապադովկիական սատրապությունը, որին միացվում է Հալիսի աղեղի մեջ մտնող

37 Հայաստանի և Մարաստանի միջև ինչ-որ հատուկ կապի գոյության մասին են վկայում Բեհիսթունի արձանագրությունների տվյալները երկու երկրների ապստամբության համաձայնեցված բնույթի մասին։

տարածքը, որը, ինչպես տեսանք, Ի. Դյակոնովի կարծիքով, մինչ այդ կա՛մ մտնում էր հայկական թագավորության կազմի մեջ, կա՛մ որպես Մարաստանին հպատակ երկրամաս կառավարվում էր հայ թագավորների կողմից։ Նոր սահմանը հասնում էր մինչև Հալիսի ակունքները, ապա խորանում էր դեպի հյուսիս, Փոքր Հայքի լեռները։ Հակառակ ուղղությամբ սահմանն անցնում էր Հալիսի վերին հոսանքով դեպի հարավ-արևմուտք։

Հարավային սահմանը կապված է Բաբիլի և Էբեր Նարի (Աբար Նահարա) մարզային միավորի կազմավորման հետ։ Բաբելոնի ու Ասորիքի տարածքն ընդգրկող այդ միավորի ստեղծողը Կյուրոսն էր։

Մ. թ. ա. 554—553 թթ. բաբելացիները դուրս մղեցին մարերին Խառանից և ընդհանրապես Հյուսիսային Միջագետքից, որին նրանք տիրել էին 610—606 թթ. միջև, ասորեստանյան ժառանգության բաժանման ժամանակ[38] և դարձան Հայաստանին սահմանակից։ 539 թ., երբ Կյուրոսը հպատակեցրեց բաբելացիներին, այս սահմանում նրանց փոխարինելու եկան պարսիկները, ավելի ճիշտ՝ այստեղ ձևավորվեց պարսկական Բաբիլի ու Էբեր Նարի մարզը, որի սահմանը Հայաստանի հետ, պետք է կարծել, հաստատվեց նույն Կաշշիարիի լեռների (Տուր Աբդին) կամ ծայրագույն դեպքում՝ արևմտյան Տիգրիսի վրա[39]։

Հայաստանի հարավային սահմանի արևելյան հատվածը որոշել չենք կարող, քանի որ չգիտենք, թե ինչպես լուծվեց Ասորեստանի հարցը Կյուրոսի օրոք։ Բեհիսթունի արձանագրության տվյալներից դատելով բուն Ասորեստանը[40], ինչպես ի միջի այլոց Մանան, շարունակում էին Մարաստանի մասը կազմել և բուն Ասորեստանը չմտավ Բաբիլի և Էբեր Նարի միավորի մեջ։ Բացառված չէ նաև, որ Կյուրոսի օրոք, մի շարք հպատակեցված երկրների օրինակով (Լիդիա) Մարաստանը բաժանվեց երկու մասի՝ Էկբատանայի շրջակայքը՝ մի կողմից և Վերին Մարաստանն ու Ասորեստանը՝ մյուս կողմից[41]։ Նման պայմաններում Հայաստանի սահմանը մարերի հետ մնացել էր անփոփոխ։ Այն անցնում էր Կորդվաց լեռներով, որոնք Հայաստանը բաժանում էին մարական Ասորեստանից և Ուրմիա լճի շրջանով, որը Հայաստանը բաժանում էր մարական Մատիանայից։

---

38 И. М. Дьяконов, История Мидии, էջ 356։ Հյուսիսային Միջագետքում նշված ժամանակահատվածում մարերի առկայությունը հաստատվում է նոր բաբելական աղբյուրների օգնությամբ։

39 Բեհիսթունի արձանագրության վկայությունը Իզալա երկրի տեղադրման մասին Ասորիքում, Խառանից հյուսիս՝ Մասիուսի լեռներում կամ նրանցից հարավ, կարծես ավելի հավանական է դարձնում հարավային սահմանի մասին եղած առաջին վարկածը (հմմտ. И. М. Дьяконов, История Мидии, էջ 315)։

40 Արբելայում Դարեհը ցից հանել տվեց սագարտիացիների ապստամբ զեկավարին, որն իրեն հռչակել էր մարական թագավորության տան շառավիղ։ Այստեղից այն հետևությունն է արվում, որ Արբելայի շրջապատը, այսինքն Ասորեստանը, մարական պետք է համարվի (И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 339, 340, 438, 439)։ Դարեհը սովորություն ուներ ապստամբ զեկավարներին մահապատժի ենթարկել այն երկրում, որտեղ նրանք ապստամբել էին։ Քանի որ սագարտիացիների առաջնորդ Չիտրանտախման իրեն մար հռչակելով նահատակվել էր Արբելայում, վերջինիս շրջապատը մարական է համարվում։

41 O. Leuze, Die Satrapieneinteilung in Syrien und im Zweistrommlande von 530—320, Halle, 1935. Ed. Meyer, Geschichte des Altertums, B. III, § 29, 89.

Հյուսիս-արևելքում և արևելքում սահմանը ամենայն հավանականությամբ անփոփոխ էր մնացել ու ընթանում էր Կուր գետով։

Մենք չգիտենք, թե մարերը արդյոք քաղաքական դիրքեր ապահովե՞լ էին բուն Անդրկովկասում, Կուրից դեպի արևելք։ Ինչպես տեսանք, Կուրի աջակողմյան տարածքում սկյութական թագավորության գոյության մասին Ի. Դյակոնովի ենթադրությունը այնքան էլ վստահություն չի ներշնչում, ուստի սկյութների վրա իրենց գերիշխանությունը հաստատած մարերի առկայությունը Անդրկովկասում ավյալ դեպքում կասկածելի է թվում։ Բայց Մարաստանի գերիշխանությունն էր ճանաչում հայկական թագավորությունը և նրա հյուսիսային մասերում է, որ մարերը հանդիպում են կոլխերին ու սասպերներին։

Կյուրոսին հաջողվեց ընդլայնել աքեմենյան Իրանի ազդեցության ոլորտը Անդրկովկասում ի հաշիվ կասպիական ափի, որտեղ ապրում էին կասպերը, այդ թվում հավանաբար և աղվաններն ու կադուսիացիները։ Սրանով հիմք դրվեց ապագա 11-րդ սատրապությանը։

Այսպիսով տեսնում ենք, որ նույնիսկ Դարեհի կողմից Հայաստանի վերջնական հպատակեցման նախօրեին, էլ չենք խոսում նախորդ տարիների մասին, հատկապես Կյուրոսի օրոք, Հայաստանը մի փոքր միավոր չէր, որն իր մեջ ընդգրկեր միայն Աղձնիք ու Կորճայք նահանգները և նրանց հարևան շրջանները, ինչպես կարծում էին Լեոն ու Հ. Մանանդյանը, այլ մի ընդարձակ երկիր, որը կարող էր համարժեք համարվել Ուրարտուին[42]։ Այդ երկրից է, որ կազմվեցին աքեմենյան 13-րդ և 18-րդ սատրապությունները։

ТЕРРИТОРИЯ ЕРУАНДИДСКОЙ АРМЕНИИ (VI в. до н. э.)

Кандидат историч. наук Г. А. ТИРАЦЯН

(Резюме)

После падения Урартского государства в начале VI в. до н. э. на территории Армянского нагорья образовалось армянское царство Еруандидов, просуществовавшее до II в. до н. э. В статье рассматриваются территория первого Еруандидского царства, границы Армении при Кире, Камбизе и в первые годы царствования Дария, обсуждаются вопросы исторической географии древней Армении.

---

42 Հ. Ծամկոչյան, Հայաստանը նախնադարյան համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում։ Երևան, 1961, էջ 144։